Յովհաննէս եպիսկոպոս որդի Ղուկասու, լեալ յառաջադոյն կաթուղիկոս Սսոյ· զսա դատանեմք ի գլուխ կառավարութեան Ս· Աթոռոյն երուսաղէմի, որպէս աւանդի ի դատաստանագրի գրեալ ի դատարանն երուսաղէմի։ Յառաջագոյն՝ Թերեւս ի ժամանակս Սարգսի, կամ Պետրոս Պատրիարքի, զորմէ գրի ի յիշատակարանս թէ՝ ծեփեալ սպիտակացոյց զեկեղեցի Ս· Յակոբայ, և զճառներն սալեաց և այլ բազում երախտիս արար Ս· Աթոռոյն։ Գեորգ անուն ոմն ի Թեբայիտէ Եգիպտոսի· բնակեալ յայնժամ ի քաղաքն սուրբ՝ լեալ փոխանորդ կամ գործակատար վանացս Ս· Յակոբայ։ Սա տուեալ էր բազմագումար դրամս տոկոսեօք միաբանաց և ժողովրդոց քաղաքին· յինքն յատիչսակեալ զղեկ կառավարութեան վանացս· սիրեալ էր ամենայն կահուց և կարասեաց, եկեղեցական ածոխոց, կալուածոց և եկամտից, և ինքն յանձանցեր զարտաքին և զառտնին գործս։

Իբրեւ եհաս Յովհաննէս եպիսկոպոս, (Թերեւս իցէ Թուլկուրանցին) Պատրիարքական իշխանութեան· եղ ի մտի խոտանել զկառավարութիւն Գեորգայ, եւ բառնալ զինքն իսկ գլխովին ի վանացս։ Խմացեալ Գեորգայ զմիտս նորա, սկսաւ բռնանալ ի վերայ միաբանացս, և գրգռել զնոսա ընդդէմ Յովհաննիսի· տեսեալ նորա թէ Գեորգ ոչ դադարի ի խռովելոյ և յաղմկելոյ զմիաբանս և պատրելոյ զպարզամիտս ի չար իւր· լուռ եկաց ժամանակս ինչ, մինչեւ յորդորեալ չինեաց զմիտս միաբանացս և յինքն յանկոյց զնոսա։ Եւ ապա եաես պշաչիւ Գեորգայ և հատոյց զամենայն դրամս զոր պահանջէր, և թափեաց ի ձեռաց նորա զկարասիս վանացս· զանօթս ոսկւոյ եւ արծաթոյ, այլովքն հանդերձ· և տուեալ զԳեորգ էջ ի դատարան տարեալ ընդ իւր զարս 4 ի վարպետաց, որոց քաջ տեղեակ էին Արաբացւոց բարբառոյ, եւ պատմեաց Գեորգ յառեղի դատաւորին, թէ յանձնեալ է զամենայն ինչս Ս· Յակոբայ, Յովհաննու Պատրիարքի· եւ առեալ զդրամս իւր զոր տուեալ էր յառաջադոյն, և յայնմհետէ չունի ինչ ասել և պահանջել զիրս, բանք Գեորգայ հաստատեցաւ վկայիւք· և դատաւորն գրեաց զամենայնն ի քարտիսի եւ եա ցՅովհաննէս, ՌՓՀ (1517)։ Ապա դարձ